انجمن فرهنگی ارامنه «چهارمحال»
ՀԱՅ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՑ «ՉՀԱՐՄԱՀԱԼ» ՄԻՈՒԹԻՒՆ
«Charmahal» Armenian Cultural Society

ՀԱՅ ՈՒՍ. «ՉՀԱՐՄԱՀԱԼ» ՄԻՈՒԹԵԱՆ
ԲՈՂՈՔԻ ՆԱՄԱԿ

Կէս դարից աւելի է ինչ սփիւռքում յայտնուած հայութիւնը, սերնդէ-սերունդ անդուլ պայքար է մղել և մղում, իրականացնելու՝ հայ ժողովրդի ամենանուիրական երազանքը, այն է կերտել՝ Ազատ, Անկախ և Միացեալ Հայաստան: Հայ Դատի ուղղութեամբ տարուող աշխատանքների ծիրում, համայն աշխարհին լսելի է դարձուել՝ հայի արդար պահանջը՝ կորցրած իրաւունքների վերատիրանալու անկոտրում կամքի անժամանցելիութիւնը, իսկ այժմ հայրենիքում տիրող իրավիճակը, խիստ մտահոգութեան առիթ է դարձել: Սահմաններին հասած անողորմ թշնամին, ոտնձգութիւններ է կատարում մեր հայրենիքի տարածքների նկատմամբ և ներկայ իշխանութիւնն էլ կանխարգելման առանձնայատուկ միջոցներ չի նախաձեռնում:

Ի հետևումն ներկայ իշխանութեան կիրառած պարտուողական քաղաքականութեան, ողջունելի է հայրենաբնակ մեր հայրենակիցների ընդվզումը և սկսած անհնազանդութեան պայքարը յանուն հայրենիքի և ազգի, նաև վարչապետի և իր վարչակազմի հրաժարականի պահանջը:

Նաև խիստ դատապարտելի է ուժայինների՝ ոստիկանական ջոկատների կողմից խաղաղ ցուցարարների նկատմամբ անհամաչափ ոյժի կիրառումը, անմարդկային վերաբերմունքը և ժողովրդավարութեան նորմերի ոտնահարումը:

Այժմ, սոյնով՝ մեր բողոքի ձայնն ենք միացնում մեր հայրենակիցների բողոքի ձայնին և ամբողջ ուժով զօրակցում նրանց պահանջին:

Յաջողութեան մաղթանքներով՝

ՀԱՅ ՈՒՍ. «ՉՀԱՐՄԱՀԱԼ» ՄԻՈՒԹԻՒՆ

تهران، خیابان میرزای شیرازی شمالی، کوچه آزادگان، پلاک ۲۸ کد پستی ۱۵۸۶۷۳۳۵۱۱ تلفن: ۸۸۷۱۴۰۳۱-۸۸۷۱۹۳۵۲ فاکس: ۸۸۱۰۰۸۴۲
No.28, Azadegan St, Mirzaye Shirazi Ave., Tehren 1586733511 Iran Tel. 88714031-88719352 Fax: 88100842
E-mail: charmahalmiyootyoon@yahoo.com